

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԵԹՈԳԱՔԱՆԱԿԱՆ ՊԱՐԶԱՔԱՆՈՒՄՆԵՐ

Համախառն ներքին արդյունք

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) հաշվարկը կատարվում է, ելնելով տնտեսության ճյուղերում ստեղծված համախառն ավելացված արժեքից՝ հաշվի առնելով անուղղակի հարկերի և սուբսիդիաների տարբերությունը: ՀՆԱ-ի հաշվարկում հաշվի են առնվում ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության ճյուղային վիճակագրությունների ամփոփ, ԼՂՀ ֆինանսների նախարարության ու բանկային համակարգի կողմից ստացված տվյալները:

ՀՆԱ-ն շուկայական գներով՝ տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացած արժեքի (ՀՆԱ հիմնական գներով) և ապրանքների (արտադրանքի) գուտ (հանած սուբսիդիաները) հարկերի գումարն է:

ՀՆԱ-ի **ինդեքս-դեֆլյատորն** ընթացիկ գներով հաշվարկված ՀՆԱ-ի հարաբերությունն է նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ՀՆԱ-ի ծավալի նկատմամբ:

Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ արժեքային արտահայտությամբ որոշվում է որպես արդյունաբերական կազմակերպությունների (ներառյալ առանձնացված ստորաբաժանումները) կողմից թողարկված արտադրանքի, կատարված արդյունաբերական բնույթի աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալների հանրագումար: Արտադրանքի ծավալի մասին տվյալները բերված են ընթացիկ գներով, առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի: Ընդ որում, պատվիրատուի հումքից և նյութերից (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում) թողարկված արտադրանքը, ընթացիկ գներով, արդյունաբերական արտադրանքի ծավալ ներառվում է առանց այդ հումքի և նյութերի արժեքի, իսկ համադրելի գներով՝ ներառյալ դրանց արժեքը:

Կազմակերպության կողմից թողարկված արտադրանքի ծավալը որոշվում է առանց ներքին շրջանառության արժեքի: Կազմակերպության ներքին շրջանառություն է համարվում արտադրված պատրաստի իրերի և կիսաֆաբրիկատների այն մասի արժեքը, որն օգտագործվում է տվյալ կազմակերպության կողմից սեփական արդյունաբերա-արտադրական կարիքների համար:

Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը բնութագրում է արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկայի փոփոխությունն արժեքային արտահայտությամբ: Հաշվարկվում է արտադրանքի ծավալները համադրելիության բերելու միջոցով: Արտադրանքի գնահատականը, համադրելի գներով, իրականացվում է անմիջականորեն կազմակերպություններում՝ արդյունաբերողների գների հիման վրա: Որպես կշիռ ընդունվում են ընթացիկ տարվա գները:

Իրացված արտադրանքի ծավալը՝ հաշվետու ժամանակաշրջանում իրացված սեփական արտադրանքի, ինչպես նաև պատվիրատուի կողմից ընդունված, կատարված աշխատանքների և ծառայությունների արժեքն է՝ անկախ այն բանից, թե դրանց վճարները կազմակերպության հաշվարկային հաշիվ մուտքագրվել են, թե ոչ:

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը բնեղեն արտահայտությամբ, որպես կանոն, բերվում է ըստ արտադրանքի համախառն թողարկման, այսինքն ներառյալ կազմակերպության ներսում արդյունաբերա-արտադրական կարիքների համար ծախսված և պատվիրատուի հումքից թողարկված արտադրանքը:

Սպառողական ապրանքների թողարկումն արժեքային արտահայտությամբ արտացոլում է պարենային ապրանքների, ակոհոլային խմիչքների և ոչ պարենային ապրանքների արտադրությունն արտադրողի բացթողման գներով, առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի: Սպառողական ապրանքներին են դասվում արտադրանքի այն տեսակները, որոնց մեծ մասն օգտագործվում է բնակչության կողմից վերջնական սպառման համար: Արտադրանքի այն տեսակները, որոնք կարող են օգտագործվել ինչպես արտադրական, այնպես էլ ոչ արտադրական սպառման համար, սպառողական ապրանքներին են դասվում այն մասով, որն օգտագործվում է ոչ արտադրական սպառման համար: Սպառողական ապրանքների արտադրության ծավալների ինդեքսները հաշվարկվում են համադրելի գներով:

Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ բուսաբուծության և անասնաբուծության արտադրանքի գումարն է արժեքային արտահայտությամբ՝ տվյալ տարվա ընթացիկ գներով: Յուրանիշը հաշվարկվում է գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող անձանցից ստացված վիճակագրական հաշվետվությունների տվյալներով:

Բուսաբուծության համախառն արտադրանքը ներառում է հաշվետու տարում.

- ստացված հացահատիկի և հատիկաբնդեղենների, տեխնիկական մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարաբուսատանային մշակաբույսերի, պտղի և հատապտղի, խաղողի, կերային մշակաբույսերի արտադրանքի, գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի և բազմամյա տնկանյութի և այլնի արժեքը,
- բազմամյա տնկարների հիմնման և մշակման արժեքը,
- բուսաբուծության արտադրանքի անավարտ արտադրության փոփոխության արժեքը (աշնանացանի, ցրտահերկի բարձրացման և այլ աշխատանքների ծախսերը, որոնք կատարվում են հաշվետու տարում՝ հաջորդ տարվա բերքի տակ):

Անասնաբուծության համախառն արտադրանքը ներառում է հաշվետու տարում.

- անասունների աճեցումից ստացված մթերքի (միս, կաթ, բուրդ, ձու և այլն) արժեքը,
- անասունի, թռչնի և այլ անասնատեսակների աճեցումից ստացված արժեքը (ծնի, հավելանի և քաշանի արժեքը), առանց իրացված մսի արժեքի,

- մեղավորության արտադրանքի արժեքը և այլն:

Անտառային տնտեսություն

Ոլորտի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվում է «Արցախանտառ» ՊՈԱԿ-ից: Այն իր մեջ ներառում է հետևյալ ցուցանիշները.

- անտառաբուծություն, որը ներառում է անտառապատման և անտառվերականգնման, խնամքի և սանիտարական հատումների, սերմնային, տնկարանային տնտեսության գործունեության արտադրության ծավալները,
- փայտամթերում, որը ներառում է շինափայտի, վառելափայտի, երկրորդական օգտագործման կոճղերի, խեժերի, դաբադային նյութերի, ամանորյա տոնածառների և հյուսած արտադրատեսակների արտադրության ծավալները,
- վայրի բույսերի և անտառային մթերքների մթերում, որը ներառում է հավաքագրված վայրի պտղի, սերմերի, բուսական հյութերի և հանուկների, մամուռի, քարաքոսի և դեղաբույսերի արտադրության ծավալները,
- անտառաբուծության և փայտամթերումների բնագավառում ծառայությունների մատուցում, որը ներառում է անտառաշինության և անտառի կառավարման մշակված ծրագրերի, սերմերի և տնկանյութի որակափոխման, անտառի ավիացիոն պաշտպանության, պահպանության, անտառմելիորատիվ, հակահրդեհային և այլ աշխատանքների (ծառայություններ) արտադրության ծավալները:

Շինարարություն

Հիմնական միջոցները կազմում են հանրապետության հարստության կարևորագույն մասը: Հիմնական միջոցներ են համարվում շենքերը, շինությունները, մեքենաներն ու սարքավորումները (բանվորական և ուժային սարքավորումները, չափիչ և կարգավորիչ փորձասարքերն ու հարմարանքները, լաբորատոր սարքավորումները, հաշվողական տեխնիկան), փոխադրամիջոցները և հիմնական միջոցների այլ տեսակներ:

Հիմնական միջոցների մեջ են ներառվում նաև պետական և մասնավոր հատվածների կազմակերպությունների բոլոր հիմնական միջոցները, ինչպես նաև ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցները: Այդ միջոցների մեջ ներառվում են բնակելի շենքերը, բնակչության անձնական օժանդակ տնտեսությունների, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների (տնտեսական շենքեր, գյուղտեխնիկա) հիմնական միջոցները:

Հիմնական միջոցների գործարկման ցուցանիշի մեջ ներառվում է շինարարությունն ավարտված և շահագործման հանձնված կազմակերպությունների, արտադրական և ոչ արտադրական նշանակության շինությունների արժեքները, նոր շահագործվող մեքենաների, բոլոր տիպի տրանսպորտային միջոցների (մոնտաժվող և չմոնտաժվող, շինարարության նախահաշվի մեջ մտնող և չմտնող) արժեքները, գործիքների, գույքի և այլ առարկաների արժեքները, որոնք հաշվառված են հիմնական միջոցների մեջ, հողերի ոռոգման և չորացման աշխատանքների արժեքը, հողերի բարելավման հետ կապված կապիտալ ծախսերը և հիմնական միջոցների արժեքի մեծացման հետ կապված այլ ծախսերը:

Շինարարության ծավալում ընդգրկվում են նոր շինարարության, գործող արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, առևտրի և այլ կազմակերպությունների վերակառուցման, ընդլայնման և տեխնիկական վերազինման, շենքերի ամրացման, վերանորոգման, բնակարանային, սոցիալ-մշակութային նշանակության օբյեկտների շինարարության աշխատանքների արժեքները, բոլոր տեսակի սարքավորումների տեղադրման, գործիքների, գույքի ձեռքբերման համար կատարված կապիտալ ծախսերը և այլ շինարարական աշխատանքներ:

Շինարարության ծավալն արտահայտվում է համապատասխան տարվա ընթացիկ ծախսերի գներով:

Բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը բաղկացած է բնակելի շենքերի մակերեսից և մշտական տիպի հանրակացարանների, ծերանոցների, մանկատների և գիշերօթիկ դպրոցների ննջարանային տարածությունների բնակելի մակերեսից և օժանդակ տարածությունների մակերեսից:

Օժանդակ տարածությունների թվին են պատկանում բնակարանի ներսում գտնվող խոհանոցը, միջանցքները, սանհանգույցները, լողասենյակները, հանդերձարանները, պահեստները, պահարանները: Հանրակացարաններում, բացի վերը նշվածներից, օժանդակ տարածությունների թվին են պատկանում նաև մշակութակենցաղային նշանակության և բժշկական ծառայության տարածությունները: Օժանդակ տարածությունների մեջ են մտնում փակ պատշգամբները, լոջաները, երկարավուն պատշգամբները, եթե դրանք նախատեսված են նախագծերի տեխնիկատնտեսական ցուցանիշներով:

Բնակարանային և հյուրանոցային տիպի բնակելի տների, ինչպես նաև բնակարաններ պարունակող ոչ բնակելի շենքերի բնակելի մակերեսի մեջ ընդգրկվում է բնակարանի ներսում գտնվող բնակելի սենյակների՝ ճաշասենյակների, ննջասենյակների, մանկական սենյակների և այլ բնակելի սենյակների մակերեսը:

Բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի մեջ չեն մտնում նախաքահների, նախամուտքերի, աստիճանավանդակների, ընդհանուր միջանցքների մակերեսները, ինչպես նաև բնակելի շենքերին կից կառուցված ոչ բնակելի տարածքների մակերեսները:

Տրանսպորտ

Տրանսպորտը, որպես տնտեսական գործունեության տեսակ, բաժանվում է ընդհանուր և ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտի:

Ընդհանուր օգտագործման տրանսպորտն իրականացնում է տնտեսության ճյուղերի, քաղաքացիների բեռների, ինչպես նաև ընդհանուր օգտագործման երթուղիներով ուղևորների փոխադրումները:

Ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտը իրականացնում է տվյալ կազմակերպության բեռների փոխադրումները (ավտոմոբիլային տրանսպորտի համար՝ ավտոտրանսպորտային միջոցներով, երկաթուղային

տրանսպորտի համար՝ ոչ ընդհանուր օգտագործման մերձատար ուղիներ), ինչպես նաև ավտոտրանսպորտով տվյալ կազմակերպության աշխատողների փոխադրումները (ներառնալով նաև և ծառայողական):

Ընդհանուր օգտագործման տրանսպորտի հիմնական ցուցանիշներն են **բեռների փոխադրումների ծավալը (տոննա), բեռնաշրջանառությունը (տոննա-կիլոմետր), ուղևորների փոխադրումների ծավալը (ուղևոր) և ուղևորաշրջանառությունը (ուղևոր-կիլոմետր):**

Փոխադրված բեռների (բեռնափոխադրումներ) ծավալում ներառվում է փոխադրված բեռների փաստացի քանակը՝ հաշվի առնելով տարալի քաշը, կոնտեյների քաշը:

Բեռնաշրջանառությունը (տոննա-կիլոմետրով) հաշվարկվում է փոխադրվող բեռների յուրաքանչյուր խմբի քաշի(տոննա) և այդ բեռնափոխադրման հեռավորության արտադրյալների հանրագումարով:

Ուղևորափոխադրումների ծավալում ներառվում է տրանսպորտային միջոցներով փաստացի փոխադրված ուղևորների քանակը (ներառյալ անվճար երթևեկության իրավունքներից օգտվող ուղևորները):

Ուղևորաշրջանառությունը (ուղևոր-կիլոմետր) որոշվում է առանձին երթուղիներով փոխադրված ուղևորների քանակի և մեկ ուղևորի փոխադրման միջին հեռավորության արտադրյալների հանրագումարով:

Ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրման (փոխադրված ուղևորների թվաքանակը) և ուղևորաշրջանառության ծավալները որոշվում են ըստ հաղորդակցության առանձին տեսակների՝ ներքաղաքային, ներշրջանային, միջշրջանային և միջպետական:

Կապ

Կապի ոլորտը ներառում է՝

փոստային և սուրհանդակային գործունեությունը՝ ներառում է տարբեր քաշի ծանրոցների, փաթեթների, նամակների ընդունումը, փոխադրումը, տեղ հասցումը: Ցուցանիշում ներառվում է փոստի ազգային օպերատորի և փոստային ու սուրհանդակային ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների գործունեությունը:

Հեռահաղորդակցության կապի գործունեությունը՝ ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցումը և դրա հետ կապված ծառայությունների մատուցումը:

Լարային հեռահաղորդակցական համակարգերի ծառայությունները.

- հեռախոսային ցանցի,
- հեռագրական կապի,
- ինտերնետ հասանելիության,
- մալուխային հեռուստատեսային համակարգերի:

Անլար հեռահաղորդակցական համակարգերի ծառայությունները.

- բջջային հեռախոսակապի,
- ռադիոալիքային (փեյջինգային) կապի,
- շառավղային գործունեության կապի,
- ինտերնետ հասանելիության:

Արբանյակային կապի ծառայությունները ներառում է ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցման համար արբանյակային կապն ապահովող միջոցների սպասարկումն ու շահագործումը կամ այդ կապից օգտվելու հնարավորության տրամադրումը, հեռուստաալիքներով ու հեռուստատեսային կայաններից և ցանցերից կամ ռադիոցանցներից ստացված ձայնա-, տեսաձրագրերի, տեքստերի փոխանցումն անմիջական սպառողին, ինչպես նաև ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրումը՝ արբանյակային հեռահաղորդակցական կապն ապահովող օպերատորի կողմից:

Հեռուստառադիոձրագրերի կազմում և հեռարձակում հատվածը ներառում է հեռուստառադիոձրագրերի՝ նորությունների, ժամանցային ձրագրերի, բանավեճերի ու համանման այլ ձրագրերի կազմման և հեռարձակման կամ տարածման իրավունքով ձեռքբերված պատրաստի հեռուստառադիոձրագրերի հեռարձակման հետ կապված գործունեությունը, ինչպես նաև տվյալների փոխանցումը, սովորաբար երբ այն իրականացվում է հեռուստառադիոհեռարձակման համակարգում:

Սպառողական շուկա

Մանրածախ առևտրի շրջանառությունը վերջնական սպառման կամ տնային տնտեսությունում օգտագործման համար նախատեսված սպառողական ապրանքների վաճառքն է արժեքային արտահայտությամբ, առանց ավելացված արժեքի և այլ նմանատիպ (անուղղակի) հարկերի:

Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի ցուցանիշը ձևավորվում է խանութների, կրպակների (տաղավարների), հանրային սննդի օբյեկտների, սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառների), գյուղատնտեսական արտադրանքի շուկաների և առևտրի իրականացման համանման այլ օբյեկտների միջոցով իրականացված ապրանքաշրջանառության հիման վրա:

Ծառայությունների ծավալն արտացոլում է մատուցված տարբեր տեսակի ծառայությունների ծավալը և հաշվառվում է այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մատուցվել են ծառայությունները, անկախ վճարումից, առանց ավելացված արժեքի և այլ նմանատիպ (անուղղակի) հարկերի:

Ծառայությունների ծավալի ցուցանիշը ձևավորվում է հյուրանոցների և ռեստորանների, տրանսպորտի, զբոսաշրջության գործակալությունների գործունեության, կապի, կոմունալ, սոցիալական, անհատական ծառայությունների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգման, անշարժ գույքի հետ կապված գործառնությունների, ֆինանսական գործունեության, մեքենաների և սարքավորանքի վարձակալման, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի վարձույթի, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի, հետազոտությունների և մշակումների, կրթության, առողջապահության և այլ տեսակի ծառայություններից:

Գներ

Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) բնութագրում է բնակչության անճնական սպառման համար ձեռք բերված ապրանքների և ծառայությունների փաստացի հաստատագրված կազմի արժեքի փոփոխությունը ժամանակի և տարածության մեջ:

ՍԳԻ հաշվարկման համար Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության 6 բնակավայրերում սահմանված մեթոդաբանությամբ կատարվում է սպառողական գների (սակագների) ամենամսյա դիտարկում:

Սահմանված է գների դիտարկման հետևյալ կարգը.

Հետազոտվող բնակավայրերում, յուրաքանչյուր ամիս, կատարվում է սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների սակագների դիտարկում: Յուրաքանչյուր ապրանքատեսակի (ապրանքախմբի) և բնակչությանը մատուցված վճարովի ծառայության համար ընտրված է ապրանք (ծառայություն) -ներկայացուցիչ (ընդամենը 411 անվանում)՝ նախապես նշելով դրանց բնութագրերը, չափման միավորը և այլ անհրաժեշտ հատկանիշները: Ամեն ապրանքատեսակի կամ ծառայության համար հետազոտվում է 7-11 առևտրի (ծառայության) կետ՝ ամկախ սեփականության ձևից: ՍԳԻ-ի հաշվարկման համար յուրաքանչյուր ամիս, յուրաքանչյուր բնակավայրում ամեն մի ապրանքատեսակի համար կատարվում է մինչև 33 գնային դիտարկում, այսինքն՝ ամեն ամիս գրանցվում և մշակվում է շուրջ 94000 գնային տեղեկատվություն:

Գները դիտարկվում են յուրաքանչյուր ամսվա համար 3 անգամ՝ 1-ին, 10-ին և 20-ին մոտակա օրերին և գրանցված գների հիման վրա ըստ ապրանքատեսակների և ըստ դիտարկվող բնակավայրերի կատարվում է միջին ամսական գների հաշվարկ՝ ըստ ապրանքատեսակների և ըստ դիտարկվող բնակավայրերի:

Սպառողական գների (սակագների) ամենամսյա դիտարկումը կատարվում է Ստեփանակերտ, Մարտակերտ, Մարտունի, Ասկերան, Հաղրոս, Շուշի և Բերձոր բնակավայրերում: Հետազոտության մեջ ընդգրկված 6 շրջանների և Ստեփանակերտ քաղաքի համար կշիռ է վերցվում բնակչության թվաքանակը, ընդհանուր ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների ծավալներում դրանց տեսակարար կշիռները: Հաշվարկված միջին ամսական գների և տեսակարար կշիռների հիման վրա կատարվում է սպառողական գների ինդեքսի հաշվարկ ինչպես հանրապետության, այնպես էլ շրջանների կտրվածքով:

ՍԳԻ-ն հաշվարկվում է բազիսային անփոփոխ կշռվածությամբ, այսինքն հաշվվում է մաքուր գնային ինդեքս, ինչը համարվում է տղաճի չափանիշ ԼՂՀ-ում:

ԼՂՀ-ում ՍԳԻ-ն հաշվարկվում է տարբեր ժամանակահատվածների՝ նախորդ ամսվա, նախորդ տարվա դեկտեմբերի, սնախորդ տարվա համապատասխան ամսվա, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի(աճողական կարգով) և բազիսային տարվա նկատմամբ:

ՍԳԻ-ն հաշվարկելու համար կիրառվում է Լասպեյրեսի բանաձևի հետևյալ տարբերակը

$$I = \frac{\sum P_{nj}}{P_{n-1j}} \times P_{n-1j} \times Q_{oj} \div \sum P_{oj} \times Q_{oj} \times 100$$

որտեղ՝

$$P_{n-1j} \times Q_{oj} = P_{oj} \times Q_{oj} \times \frac{P_{1j}}{P_{oj}} \times \frac{P_{2j}}{P_{1j}} \times \dots \times \frac{P_{n-1j}}{P_{n-2j}}$$

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս (ԱԱԳ) արտացոլում է արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների թողարկված արտադրանքի գների՝ (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի) փոփոխությունը ժամանակի ընթացքում: Արդյունաբերական արտադրանքի գների փոփոխության դիտարկումն իրականացվում է ընտրանքային կարգով ընտրված արդյունաբերության ոլորտի բազային կազմակերպությունների տվյալների հիման վրա: Գների գրանցումն իրականացվում է ապրանքների որոշակի ցանկով, որտեղ ներգրավված է հիմնական որակական հատկանիշներով օգտագործվող հումքով և արտադրության տեխնոլոգիական գործընթացներով իրար մոտ, առավել ներկայացուցչական արտադրանք: Ըստ արդյունաբերության ճյուղերի և ենթաճյուղերի գների ինդեքսների հաջորդական փոխկապակցված հաշվարկների համար որպես կշռման բազա օգտագործվում են արդյունաբերական արտադրանքի բազային ժամանակաշրջանի արժեքային տվյալները:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս արտահայտում է գյուղմթերք արտադրողի տարբեր ուղղություններով իրացված մթերքի գների փոփոխությունները ժամանակի, ինչպես նաև տարածության մեջ: Այն հաշվարկվում է ԼՂՀ-ում գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված 33 անվանում գյուղմթերքի գների ագրեգացման միջոցով՝ ըստ բուսաբուծական և անասնապահական մթերքի և ըստ հանրապետության շրջանների: Դրանցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է անհատական ապրանքների ինդեքսների կշռված մեծություն՝ ընդգրկված միատեսակ ապրանքախմբում: Որպես անհատական ինդեքսների կշռման բազա օգտագործվում է հաշվետու ամսում իրացված արտադրանքի ծավալը:

Արտաքին առևտրի գների կամ միավորի արժեքի ինդեքսը բնութագրում է արտաքին առևտրի ապրանքների գների փոփոխման հաշվին արտահանման և ներմուծման արժեքի փոփոխությունը անփոփոխ, հաստատուն ֆիզիկական ծավալի պայմաններում: Արտաքին առևտրի գների կամ միավորի արժեքի ինդեքսների հաշվարկի համար որպես տվյալների սկզբնաղբյուր հիմք են հանդիսանում ներմուծման, արտահանման բեռնամաքային հյտարարագրերը: Նկատի ունենալով ԼՂՀ-ում մաքսային սահմանի բացակայության հանգամանքը՝ կիրառվում է ՀՀ-ում հաշվարկված արտաքին առևտրի գների կամ միավորի արժեքի ինդեքսը:

Արտաքին առևտրի գների ինդեքսի հաշվարկի համար կիրառվում է Լասպեյրեսի միջին արժեքի ինդեքսի բանաձևը: Դա թույլ է տալիս համադրել ընթացիկ ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի հետ: Միավորի արժեքը կշռվում է բազիսային ժամանակաշրջանի առևտրային հոսքերով, որոնք կարող են տարեց տարի գզալի տատանվել, կորցնել արդիականությունը և նպաստել գների ինդեքսների արհեստական աճին(նվազմանը):

Ուստի, այնպիսի բնագավառում ինչպիսին արտաքին առևտուրն է, նպատակահարմար է բազիսային ժամանակաշրջանն ընդունել նախորդ տարին:

Աշխատանք

Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձի վերաբերյալ ցուցանիշի աղբյուրը վիճակագրական մոնիթորինգում ընդգրկված պետական և մասնավոր հատվածների խոշոր ու միջին, ինչպես նաև հասարակական կազմակերպություններից հավաքագրվող հաշվետվությունների տվյալներն են, որոնք պարբերաբար համարվում են պետական և մասնավոր հատվածների փոքր և գերփոքր կազմակերպություններից հավաքագրվող տվյալներով:

Միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների (ներառյալ պարգևավճարները և փոխատուցումները) ընդհանուր գումարի (ինչպես դրամական, այնպես էլ բնեղեն տեսքով) հարաբերությամբ աշխատողների միջին ցուցակային թվաքանակին և հաշվետու ժամանակաշրջանի ամիսների թվին:

Իրական աշխատավարձը բնութագրում է դիտարկվող ժամանակահատվածում ապրանքների և ծառայությունների այն ծավալը, որը հնարավոր է ձեռք բերել աշխատավարձով, ելնելով բազիսային ժամանակաշրջանի գներից: Ցուցանիշը հաշվարկվում է տվյալ ժամանակաշրջանի անվանական աշխատավարձի հարաբերությամբ՝ նույն ժամանակաշրջանի սպառողական գների ինդեքսին:

Իրական աշխատավարձի ինդեքսը հաշվարկվում է միևնույն ժամանակաշրջանի անվանական աշխատավարձի ինդեքսի և սպառողական գների ինդեքսի հարաբերությամբ:

Աշխատավարձի ժամկետանց պարտքը փաստացի հաշվարկված, բայց դեռևս չվճարված աշխատավարձի համախառն գումարներն են (ներառյալ պարգևավճարները և փոխհատուցումները)՝ առանց օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պահումները կատարելու: Աշխատավարձի ժամկետանց պարտքի մեջ ներառվում է նաև մինչև հաշվետվության ներկայացման ժամկետը չմարված փոխանցվող պարտքի մնացորդը:

Աշխատանքային ռեսուրսները տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչության հանրագումարն են, այսինքն՝ ներառում են հանրապետության բնակչության այն մասը, որը փաստացի զբաղված է տնտեսության մեջ կամ զբաղված չէ, բայց իր տարիքային և առողջական դրությամբ ընդունակ է աշխատելու:

Աշխատանքային ռեսուրսները ձևավորվում են.

1. աշխատունակ տարիքի աշխատունակ բնակչությունից (այսինքն, աշխատունակ տարիքի բնակչությունն՝ առանց I և II խմբի չաշխատող հաշմանդամների և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող չաշխատող քաղաքացիների),
2. մինչև 16 տարեկան զբաղված դեռահասներից,
3. զբաղված կենսաթոշակառուներից:

Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության մեջ ներառվում են աշխատանքային տարիքի.

1. առկա ուսուցմամբ և արտադրությունից կտրված սովորողները և ուսանողները,
2. տնային տնտեսությամբ զբաղվածները,
3. երեխաներին, հիվանդ հարազատներին խնամողները,
4. անձինք, ովքեր զանազան պատճառներով չեն աշխատում և աշխատանք չեն փնտրում (աշխատունակ կենսաթոշակառուներ (արտոնյալ, հաշմանդամության), սեփականության օգտագործումից եկամուտ ստացողներ և այլն):

Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը զբաղված և պաշտոնապես գրանցված գործազուրկ բնակչության թվաքանակների հանրագումարն է:

Տնտեսության մեջ զբաղվածներ են համարվում վարձու և ոչ վարձու աշխատանք կատարողները, ինչպես նաև.

1. աշխատանքից ժամանակավորապես բացակայողները՝ հիվանդության, հիվանդի խնամքի, ամենամյա արձակուրդի կամ հանգստյան օրերի, աշխատավայրից դուրս ուսուցման, գործատուի նախաձեռնությամբ հարկադիր արձակուրդում (չվճարվող կամ մասնակիորեն վճարվող) գտնվելու, գործադուլի և այլ պատճառներով,
2. գյուղացիական տնտեսությունում զբաղվածները, անկախ նրանից արտադրված արտադրանքը նախատեսված է եղել իրացման (ըրիվ կամ մասնակի) և (կամ) սեփական սպառման համար, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է կազմել տնային տնտեսության սպառման մեջ,
3. տնային տնտեսությանը կամ ազգականին (բարեկամին) պատկանող ընտանեկան կազմակերպությունում օգնելու, օժանդակելու նպատակով առանց վարձատրության աշխատողները:

Վարձու աշխատողներ են համարվում անձինք, ովքեր աշխատում են գործատուի հետ կնքած պայմանագրի, աշխատանքի ընդունվելու հրամանի կամ ձեռք բերված որոշակի գրավոր կամ բանավոր համաձայնության հիման վրա և ստանում են դրամական և (կամ) բնաիրային փոխհատուցում՝ աշխատավարձի տեսքով:

Ոչ վարձու աշխատողներ են համարվում անձինք, ովքեր ինքնուրույնաբար են իրենց ապահովում եկամտաբեր տնտեսական գործունեությամբ(գործատու, ինքնագրաված, ընտանիքի առանց վարձատրության աշխատող անդամ, արտադրական, սպառողական կոոպերատիվի անդամ):

Ոչ ֆորմալ զբաղվածների մեջ ներառվում են գործատուի հետ բանավոր համաձայնությամբ (առանց պայմանագրի, հրամանի կամ օրենսդրությամբ սահմանված կարգով այլ փաստաթղթային ձևակերպման) վարձու աշխատողները, ընտանեկան կազմակերպությունում առանց վարձատրության աշխատողները, չգրանցված տնտեսական գործունեություն իրականացնող գործատուները, ինքնագրավածները և արտադրական, սպառողական կոոպերատիվի անդամները:

Աշխատանք փնտրող են համարվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության համաձայն 16 տարին լրացած այն գործունակ անձինք, ովքեր, անկախ զբաղված լինելու հանգամանքից, աշխատանքի տեղավորման նպատակով դիմել են զբաղվածության պետական ծառայություն:

Ձբաղվածության պետական ծառայությունում գրանցված գործազուրկ են համարվում աշխատանք փնտրող աշխատունակ և գործունակ այն չզբաղված անձինք, ովքեր չեն ստանում օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ, աշխատանքի տեղավորման նպատակով հաշվառված են զբաղվածության պետական ծառայությունում, պատրաստակամ են անցնելու հարմար աշխատանքի և ստացել են գործազուրկի կարգավիճակ:

Գործազրկության (աշխատանք փնտրելու) միջին տևողությունն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում քաղաքացին փնտրել է աշխատանք և հաշվարկվում է որպես կշռված միջին մեծություն գործազուրկների դիտարկվող կազմի համար:

Գործազրկության մակարդակը հաշվարկվում է գործազուրկների թվաքանակի տոկոսային հարաբերությամբ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակին:

Ձբաղվածության մակարդակը հաշվարկվում է զբաղվածների թվաքանակի տոկոսային հարաբերությամբ համապատասխան տարիքային խմբի բնակչության կամ աշխատանքային ռեսուրսների թվաքանակին:

Տնտեսական ակտիվության (աշխատուժի մասնակցության) մակարդակը հաշվարկվում է տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի տոկոսային հարաբերությամբ համապատասխան տարիքային խմբի բնակչության կամ աշխատանքային ռեսուրսների թվաքանակին:

Աշխատուժի նկատմամբ գործատուի հայտարարած պահանջարկը թափուր աշխատատեղերի (պահանջվող աշխատողների) թիվն է, որի վերաբերյալ գործատուն հայտնում է զբաղվածության պետական ծառայությանը:

Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռվածությունը հաշվարկվում է զբաղվածության պետական ծառայությունում հաշվառված աշխատանքային գործունեությամբ չզբաղված քաղաքացիների թվաքանակի և գործատուների կողմից նույն ծառայությանը հայտնած թափուր աշխատատեղերի թվի հարաբերությամբ:

Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր

Բնակչության դրամական եկամուտները ներառում են վարձու աշխատողների աշխատավարձը, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները, կենսաթոշակները, նպաստները, կրթաթոշակները և այլ սոցիալական տրամաֆերտները, արտարժույթի վաճառքից, սեփականությունից եկամուտները՝ ներդրումների, արժեթղթերի, շահաբաժինների տոկոսների տեսքով և այլ եկամուտներ:

Բնակչության դրամական ծախսերը ներառում են ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերը, պարտադիր վճարները և կամավոր մուծումները (հարկեր և գանձումներ, ապահովագրական վճարներ, հասարակական կազմակերպություններին կատարված մուծումներ, վարկերի դիմաց վճարված տոկոսներ և այլն), ինչպես նաև խնայողությունների հավելաճը (նվազումը) արժեթղթերում և ավանդներում, արտարժույթի գնման և այլ ծախսեր:

Ֆինանսներ և դրամաշրջանառություն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համախմբված բյուջեն կազմում են պետական բյուջեն և համայնքների բյուջեները, որի մուտքերը օրենքով պետական և համայնքների բյուջեներին ամրագրված աղբյուրներից ձևավորվող (ձևավորված) դրամական միջոցների (առանց միջբյուջետային փոխանցումների գծով մուտքերի), իսկ ելքերը օրենքով սահմանված ուղղություններով ծախսվող (ծախսված) դրամական միջոցների (առանց միջբյուջետային փոխանցումների գծով ելքերի) համապատասխան հանրագումարներն են:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգը հետևյալ երկու մակարդակի բյուջեների ամբողջությունն է՝

ա) առաջին մակարդակ՝ պետական բյուջե,

բ) երկրորդ մակարդակ՝ համայնքների բյուջեներ:

Պետական և համայնքի բյուջեները պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին ԼՂՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն են:

Բյուջետային եկամուտներն անվերադարձ կարգով օրենսդրությանը համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դրամական միջոցներն են:

Բյուջետային ծախսերը պետության և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրների և գործառնությունների ֆինանսական ապահովմանն ուղղված դրամական միջոցներն են:

Բյուջետային մուտքերը ներառում են տվյալ բյուջեի համար օրենքով սահմանված եկամուտները, բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, ոչ ֆինանսական ակտիվների օտարումից, տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների վերադարձից ստացվող, ինչպես նաև փոխառու և ներգրավված այլ դրամական միջոցները:

Բյուջետային ելքերը ներառում են բյուջետային ծախսերը (ընթացիկ և կապիտալ ծախսեր), ինչպես նաև բյուջետային վարկերի ու փոխատվությունների տրամադրումը և ներգրավված փոխառու միջոցների մարումները:

Բյուջետային հատկացումները բյուջեն հաստատող իրավական ակտով բյուջետային միջոցներ ստացողի գծով նախատեսված բյուջետային միջոցներն են:

Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը) ներառում են պետական և համայնքային նշանակության ծրագրերի շրջանակներում նախատեսվող այն ծախսերը, որոնք հանգեցնում են հիմնական միջոցների, պետական ռազմավարական կամ համայնքային նշանակության պահուստների ստեղծման նպատակով ապրանքային արժեքների ձեռքբերմանը կամ դրանց արժեքի ավելացմանը:

Ընթացիկ ծախսերը ներառում են այն ծախսերը, որոնք ընդգրկված չեն կապիտալ ծախսերում:

Բյուջեների պակասուրդը (դեֆիցիտը) և հավելուրդը.

- Բյուջեների ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումը կազմում է բյուջեների հավելուրդը:

- Բյուջեների եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումը կազմում է բյուջեների դեֆիցիտը (պակաստորոք):

Պետական բյուջեի պակաստորոքը ֆինանսավորվում է ներքին և արտաքին աղբյուրներից ստացվող փոխառու միջոցների, պետական բյուջեից տրամադրված փոխառու միջոցների վերադարձից ստացվող գուտ միջոցների, ինչպես նաև այդ բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Պետական բյուջեի եկամուտների աղբյուրներն են՝

ա) հարկային եկամուտները.

բ) պետական տուրքերը.

գ) պարտադիր սոցիալական ապահովության վճարները.

դ) պաշտոնական դրամաշնորհները.

ե) այլ եկամուտները:

Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն են՝

ա) պետությանը պատկանող հիմնական միջոցների (հիմնական ֆոնդերի) օտարումից մուտքերը (այդ թվում՝ լուծարված պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց լուծարումից հետո մնացած գույքի օտարումից պետական մասնակցության չափին համապատասխան մուտքերը).

բ) բարձրարժեք ակտիվների օտարումից մուտքերը.

գ) պետության պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների իրացումից մուտքերը.

դ) պետական սեփականություն համարվող չարտադրված ակտիվների՝ հողի և ոչ նյութական չարտադրված ակտիվների օտարումից մուտքերը:

Փողի բազան ներառում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամը, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում առևտրային բանկերի պարտադիր պահուստները և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում ոչ բանկային կազմակերպությունների ավանդները (բացառությամբ կառավարության ավանդների): Փողի բազան հավասար է նաև Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի գուտ արտաքին և ներքին ակտիվների հանրագումարին:

Փողի զանգվածը ներառում է շրջանառությունում կանխիկ դրամը և ռեզիդենտ տնտեսության (բնակչության, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների) դրամով և արտարժույթով բոլոր ավանդները բանկային համակարգում:

Ցայահանջ ավանդները բանկերի պահպանմանը հանձնված և որևէ գործարք իրականացնելիս հանվող միջոցներն են:

Ժամկետային ավանդները բանկերում որոշակի ժամկետով ձևակերպվող ավանդներն են:

Վարկային ներդրումները բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի գծով մնացորդներն են: Վարկային ներդրումները բաժանվում են կարճաժամկետ (տրամադրված մեկ տարուց պակաս ժամկետով) և երկարաժամկետ (մեկ տարուց ավել ժամկետով):

Վճարային հաշվեկշիռ

Վճարային հաշվեկշիռն իրենից ներկայացնում է վիճակագրական հաշվետվություն, որում համակարգված տեսքով արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակաշրջանում (եռամսյակ, տարի) ԼՂՀ արտաքին տնտեսական գործառնություններն այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ: Տնտեսական բնույթի գործառնությունները, որոնք կատարվում են ԼՂՀ ռեզիդենտների և ԼՂՀ ոչ ռեզիդենտների միջև, իրականացվում են ապրանքների և ծառայությունների, եկամուտների հոսքերի, ընթացիկ տրանսֆերտների տեսքով, ինչպես նաև ֆինանսական պահանջների և պարտավորությունների տեսքով:

Վճարային հաշվեկշիռը կազմված է երկու հիմնական հաշիվներից՝ **ընթացիկ և կապիտալի ու ֆինանսական: Ընթացիկ հաշվում** գրանցվում են ապրանքների, ծառայությունների, եկամուտների և ընթացիկ տրանսֆերտների հետ կատարված գործառնությունները, իսկ **կապիտալի ու ֆինանսական հաշվում** ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների շարժը, ինչպես նաև՝ կապիտալ տրանսֆերտները: Մեթոդաբանական առումով, ընթացիկ հաշվի մնացորդը, բացարձակ մեծությամբ, հակառակ նշանով պետք է հավասար լինի կապիտալի և ֆինանսական հաշվի մնացորդին, սակայն իրականում միշտ առաջանում են տարբերություններ, որը միջազգային պրակտիկայում ընդունված է անվանել «սխալների և բացթողումների» հոդված:

Ֆինանսական հաշիվը կազմված է 4 հոդվածներից՝ օտարերկրյա ուղղակի, պորտֆելային, այլ ներդրումներից ու պահուստային ակտիվներից: Վճարային հաշվեկշիռում օտարերկրյա ներդրումները բերված են գուտ հիմքով, այսինքն՝ օտարերկրյա ներդրումների հոսքեր հանած վճարումներ (ուղղակի ներդրումների դեպքում նաև ներֆիրմային շարժ): Վճարային հաշվեկշիռում արտացոլված օտարերկրյա ներդրումները ներառում են ինչպես իրական հատվածում կատարված ներդրումները, այնպես էլ բանկային և պետական կառավարման համակարգերով իրականացված ներդրումները:

Օտարերկրյա ներդրում է համարվում գույքի ցանկացած տեսակ (այդ թվում՝ ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ (ոչ նյութական ակտիվներ)), որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է ԼՂՀ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի (եկամտի) ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով: Օտարերկրյա ներդրումները ըստ տեսակի լինում են ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումների տեսքով:

Ուղղակի ներդրումը կատարվում է արտասահմանյան ուղղակի ներդրողների կողմից, որոնք ձգտում են ձեռք բերել ուղղակի ներդրումով իրավաբանական անձի գործունեության վրա կայուն տևական ազդեցություն: Ուղղակի ներդրող (ինվեստոր) է համարվում ոչ ռեզիդենտ միավորը, նրա հետ կապված կամ համագործակցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը (ընկերությունը), որին պատկանում է ԼՂՀ ռեզիդենտ միավորի բաժնետիրական կապիտալի ոչ պակաս, քան 10%-ը: Ուղղակի ներդրումները լինում են բաժնետիրական կապիտալի, վերաներդրված (ռեինվեստիցիոն) եկամուտների և այլ կապիտալի տեսքով:

Պորտֆելային ներդրումն օտարերկրյա ներդրողների այն կապիտալ ներդրումն է, որը թույլ է տալիս օտարերկրյա ներդրումով կազմակերպությունում ունենալ սահմանափակ ազդեցություն և ստանալ որոշակի շահույթ, որը կարգավորում է կողմերի միջև կնքվող պայմանագրով: Պորտֆելային ներդրումները լինում են կապիտալի արժեթղթերի՝ գլխավորապես բաժնետոմսերի (բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկվող) և պարտքի արժեթղթերի տեսքով:

Այլ ներդրումները ներդրումների այն մնացած մասն է, որը ներառում է բոլոր տեսակի ֆինանսական գործառնությունները, որոնք չեն ընդգրկվել ուղղակի և պորտֆելային ներդրումներում: Այլ ներդրումները լինում են վարկերի՝ դրամական և առևտրային (բացի օտարերկրյա ներդրումով կազմակերպության ստացածն իր անմիջական ներդրող կազմակերպությունից, որը ուղղակի ներդրում է), ավանդների և այլ ակտիվների/պարտավորությունների տեսքով:

Օտարերկրյա ներդրումների վիճակագրությունն իրականացվում է հաշվետու ժամանակահատվածում կատարված համախառն հոսքերի, հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ համախառն հոսքերի պաշարների և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ մաքուր պաշարների տեսքով:

Համախառն հոսքերն արտացոլում են հաշվետու ժամանակահատվածում տնտեսություն մուտք գործած օտարերկրյա ներդրումների ծավալները:

Համախառն հոսքերի պաշարներն ընդգրկում են հաշվետու ժամանակահատվածի վերջին միայն գործառնության արդյունքում իրականացված ներդրումների ծավալների հանրագումարը (առանց պարտավորությունների գծով մարումները, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների՝ արտակարգ իրավիճակների, մեխանիկական սխալի և կազմակերպության ուղղակի լուծարման արդյունքում իրականացված փոփոխությունները):

Մաքուր պաշարներն ընդգրկում են հաշվետու ժամանակահատվածի վերջին ինչպես գործառնության արդյունքում իրականացված ներդրումների ծավալների հանրագումարը, այնպես էլ պարտավորությունների գծով մարումները, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների՝ արտակարգ իրավիճակների, մեխանիկական սխալի և կազմակերպության ուղղակի լուծարման արդյունքում իրականացված փոփոխությունները:

Արտաքին առևտուրը

Արտաքին առևտրի վերաբերյալ (արտաքին առևտրի շրջանառություն, արտահանում, ներմուծում, առևտրային հաշվեկշիռ) ցուցանիշների հաշվարկման համար հիմք են հանդիսացել ապրանքների ներմուծման ու արտահանման մասին տեղեկությունները՝ ստացված ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայությունից և վիճակագրական հաշվետվություններից, ինչպես նաև համապատասխան սուբյեկտներից ստացված բնական գազի ներմուծման և էլեկտրաէներգիայի արտահանման և ներմուծման տվյալները:

Արտահանումը ապրանքների արտահանումն է այլ երկրներ՝ ազատ շրջանառության կամ ակտիվ վերամշակման համար: Արտահանման ծավալում ընդգրկված են ինչպես հայրենական արտադրության, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության ապրանքները: Արտահանված ապրանքների արժեքները հաշվարկված են ՖՕԲ գնով՝ ապրանքի արժեքը մինչև ԼՂՀ սահման:

Ներմուծումը ապրանքների ներմուծումն է այլ երկրներից՝ հանրապետության ներսում ազատ շրջանառության և ակտիվ վերամշակման համար: Ներմուծման ծավալում ընդգրկված են արտասահմանյան ապրանքները, որոնք ներմուծվել են հանրապետություն սպառման և վերաարտահանման համար: Ներմուծված ապրանքների արժեքները հաշվարկված են ՄԻՖ գնով՝ ապրանքի արժեքը մինչև ԼՂՀ սահման, ներառյալ ապահովագրության և տրանսպորտային փոխադրության ծախսերը:

Արտաքին առևտրի շրջանառությունը արտահանման և ներմուծման ծավալների հանրագումարն է:

Արտաքին առևտրի հաշվեկշիռը արտահանման(ՖՕԲ) և ներմուծման(ՄԻՖ) ծավալների տարբերությունն է:

Տնտեսության բացվածությունը ցույց է տալիս ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ:

Ներմուծման (արտահանման) միջին հակվածությունը ցույց է տալիս ներմուծման (արտահանման) տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ:

Ժողովրդագրություն

Մշտական բնակչությունը մշտական ապրող բնակչությունն է, ներառյալ ժամանակավոր (մինչև 1 տարի ժամկետով) բացակայողները:

Բնակչության բնական շարժը ծնվածների և մահացածների համակցության ընդհանրացված անվանումն է՝ բնական ճանապարհով թվաքանակի փոփոխումը: Բնակչության բնական շարժին վերագրվում են նաև ամուսնություններն ու ամուսնալուծությունները, որոնք բնակչության թվաքանակի ցուցանիշի վրա ուղղակի ազդեցություն չունեն, սակայն հաշվարկվում են նույն եղանակով:

Բնակչության միաբանակի հաշվարկ - Ստեփանակերտ քաղաքի ընթացիկ հաշվառումը տարվում է բնակչության վերջին մարդահամարի արդյունքների հիման վրա: Հաշվարկները կատարվում են ծնվածների և մահացածների ակտերի հիման վրա, որոնք ստացվում են ԼՂՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ստեփանակերտի քաղաքային բաժնից: Տվյալների բազա է համարվում նաև եկողների և մեկնողների կտրոնների հաշվառումը, որոնք ստացվում են ԼՂՀ ԿԱ ԼՂՀ ոստիկանության քաղաքային բաժնի կողմից:

Շրջաններում ընթացիկ հաշվառումը տարվում է վիճակագրական հաշվետվության ձևերով (Ձև թիվ 9-Ս (տարեկան)):

Ծնունդների, մահերի, ամուսնության, ամուսնալուծության վերաբերյալ տեղեկությունները ստացվում են ԼՂՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից կազմված ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության ակտերի հիման վրա: Ծնվածների թվաքանակի մեջ ներառված են միայն կենդանի ծնված երեխաները:

Ծնելիության և մահացության ընդհանուր գործակիցները՝ հաշվետու ժամանակաշրջանում գրանցված, համապատասխանաբար, ծնվածների (կենդանի) թվաքանակի ու մահվան դեպքերի և հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված մշտական բնակչության թվաքանակի միջին ցուցանիշի հարաբերություններն են, որոնք հաշվարկվում են 1000 բնակչի հաշվով:

Բնական հավելանքի գործակիցը՝ ծնելիության և մահացության ընդհանուր գործակիցների տարբերությունն է:

Ամուսնության և ամուսնալուծության ընդհանուր գործակիցները՝ հաշվետու ժամանակաշրջանում, համապատասխանաբար, գրանցված ամուսնությունների և ամուսնալուծությունների քանակի և տվյալ ժամանակաշրջանի համար հաշվարկված մշտական բնակչության թվաքանակի միջին ցուցանիշի հարաբերություններն են: Հաշվարկվում է 1000 բնակչի հաշվով:

Բոլոր գործակիցները հաշվարկվում են իրականացվում են համապատասխանեցնելով դրանք տարվան հավասարազոր հաշվարկին:

Կենդանածնություն է համարվում մոր օրգանիզմից բեղմնավորման արգասիքի լրիվ արտամղումը կամ դուրսբերումն անկախ հղիության ժամկետից, որից հետո պտուղը շնչում կամ ցուցաբերում է կյանքի որևէ այլ նշան՝ ինչպիսիք են սրտխփոցը, պորտալարի անոթազարկը կամ կամային մկանների ակնհայտ շարժումները, անկախ նրանից, թե արդյոք կտրված է պորտալարը, և (կամ) անջատված է ընկերքը:

Մեռելածնություն է համարվում մոր օրգանիզմից բեղմնավորման արգասիքի լրիվ արտամղումը կամ դուրսբերումն, որից հետո պտուղը չի շնչում կամ չի ցուցաբերում կյանքի որևէ այլ նշան՝ ինչպիսիք են սրտխփոցը, պորտալարի անոթազարկը կամ կամային մկանների ակնհայտ շարժումները:

Մահվան պատճառների մասին տեղեկատվության աղբյուր է հանդիսանում մահվան մասին բժշկի կողմից կազմված մահվան բժշկական վկայագրում՝ հիվանդության, վնասվածքների, թունավորումների և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքների վերաբերյալ գրանցումները, որոնք մահվան պատճառ են հանդիսացել: Նշված փաստաթղթերը՝ մահվան վերաբերյալ ակտին կից, վիճակագրական մշակման նպատակով, տրամադրվում են վիճակագրական մարմիններին:

Մահվանահացության գործակիցը, եռամսյակային կտրվածքով, մինչև մեկ տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նույն ժամանակահատվածում կենդանի ծնվածների թվաքանակին: Տարեկան կտրվածքով այն հաշվարկվում է որպես երկու բաղադրիչների գումար: Դրանցից առաջինն այդ տարում ծնվածների սերնդից (որի համար հաշվարկվում է գործակիցը) մինչև մեկ տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նույն տարում կենդանի ծնվածների ընդհանուր թվաքանակին, իսկ երկրորդը՝ նախորդ տարում ծնվածների սերնդից մինչև մեկ տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նախորդ տարում ծնվածների ընդհանուր թվաքանակին: Հաշվարկվում է 1000 կենդանածնությունների հաշվով:

Երեխաների մահացության գործակիցը(մինչև 5տարեկան)՝ հաշվետու ժամանակաշրջանում մինչև 5 տարեկան հասակում մահացած երեխաների թվաքանակի ցուցանիշի հարաբերությունն է կենդանի ծնվածների թվաքանակի ցուցանիշին: Հաշվարկվում է 1000 կենդանի ծնվածի հաշվով:

Մայրական մահացության գործակիցը՝ հաշվետու ժամանակաշրջանում հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում արձանագրված մահվան դեպքերի հարաբերությունն է կենդանի ծնվածների թվաքանակի ցուցանիշին: Հաշվարկվում է 100 000 կենդանի ծնվածի հաշվով:

Առողջապահություն

Վարակիչ և տարափոխիկ հիվանդություններ: Այլ սալմոնելոզային ինֆեկցիաներ՝ ներառում են տոկսիկոինֆեկցիոն հիվանդությունները՝ հարուցված տարբեր սերոտիպի սալմոնելոզներով (սալմոնելոզային գաստրոէնտերիտ և սալմոնելոզի գեներալիզացված ձևերը):

Էնտերիտներ, կոլիտներ, գաստրոէնտերիտներ, սննդային տոկսիկոինֆեկցիաներ՝ հարուցված հաստատված հարուցիչներով՝ ներառում է հաստատված բակտերիալ հարուցիչներով էնտերիտները, կոլիտները, գաստրոէնտերիտները, աղեմովիրուսներով և էնտերովիրուսներով հարուցված էնտերիտները, ինչպես նաև այլ վիրուսային էնտերիտներ:

Մուր աղիքային ինֆեկցիաներ՝ չհաստատված և չճշտված հարուցիչներով սննդային տոկսիկոինֆեկցիաներ՝ չեն ներառում սալմոնելոզային ինֆեկցիաներ, բուտուլիզմը և թունավոր հաստապտուղներով, սնկերով թունավորումները և այլն:

Ծճադրական: Մարդու իմունային անբավարարության վարակի նկատմամբ իմունոֆերմենտային անալիզի միջոցով կատարված հետազոտություններից եկուսը եղել են դրական:

Հաշմանդամություն

Հաշմանդամությունը՝ օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումների հետևանքով առաջացած սոցիալական անբավարարություն է՝ որը հանգեցնում է անձի կենսագործունեության սահմանափակման և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության:

Իրավախախտումներ

Հանցագործություններ: Բացահայտված և պաշտոնապես գրանցված, քրեական օրենսդրության սահմանված հասարակական վտանգավոր գործողություններն են, որոնց մասին ամփոփ տեղեկատվությունը ստացվում է ԼՂՀ ԿԱ ԼՂՀ ռադիոկոմիտեից: Ծանր հանցագործություններ համարվում են՝ հանրորեն առավել վտանգավորություն ներկայացնող դիտավորյալ արարքները:

Տնտեսական հանցագործություններ են՝ երկրի տնտեսության ոլորտում կատարվող հանրորեն վտանգավոր արարքները, որոնք նախատեսված են օրենքով:

Հարկային հանցագործությունները՝ տնտեսական բնույթի հանցագործություններ են, որոնք որակվում են ԼՂՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով:

Դատական ակտերի հարկադիր կատարում: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված կատարողական գործողություններն են:

Փաստացի բռնագանձված գումար՝ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով նախատեսված բռնագանձման ենթակա գումարից փաստացի կատարված բռնագանձում:

Կատարողական վարույթով պետտուրքի բռնագանձում դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով նախատեսված ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված տուրք, որն ենթակա է պարտադիր բռնագանձման:

Ստանդարտացումն՝ իրականում գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ համընդհանուր և բազմակի կիրառման համար դրույթների սահմանման միջոցով որոշակի բնագավառում կարգավորվածության լավագույն աստիճանին հասնելուն ուղղված գործունեություն է:

Սերտիֆիկացումը համապատասխանության հավաստման ընթացակարգ է, որի արդյունքում սերտիֆիկացման մարմինն գրավոր հավաստիացնում է արտադրանքի կամ ծառայության համապատասխանությունը նորմատիվ պահանջներին:

Հավաստագրումը ընթացակարգ է, որի միջոցով հավաստագրման խորհուրդը պաշտոնապես ճանաչում է իրավաբանական անձի իրավասությունը՝ համապատասխանության հավաստման որոշակի ոլորտում աշխատանքներ կատարելու համար, ինչպես նաև պաշտոնապես ճանաչում է արտադրանք արտադրողից կամ ծառայություն մատուցողից այդ իրավաբանական անձի անկախությունը:

Բնապահպանություն

Բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարն է:

Բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար տնտեսավարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց ԼՂՀ պետական բյուջե վճարվող վճարն է: